# ԻՋԵՎԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Տավուշի մարզ ք/Իջևան   Ուսանողական փ 3   հեռ. (093)007010   e-mail info_idjevan@aarhus.am , david.ghazaryan.83@mail..ru


Ե N-001   « 31»  մարտի 2014թ.

*ՀՀ Տավուշի մարզի Իջևանի*
*Քաղաքապետ Վ. Ղալումյանին*
*Իջևանի  Օրհուս կենտրոնի*
*Համակարգող ՝ Դավիթ Ղազարյանից*

## Հարցում

Հարգելի պարոն  Վ. Ղալումյան,

Խնդրում եմ <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի  6-րդ, 9-րդ և   12 –րդ հոդվածների համաձայն տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

- Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել Իջևանի համայնքին <<Ջուրլույս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերին ծանոթացնելու ուղղությամբ,
- Ի՞նչ կարծիք է հայտնել հանրությունը <<Իջևան 1>> ՓՀԷԿ-ի աշխատանքային նախագծի վերաբերյալ,
- Ուսումնասիրվե՞լ են, արդյոք, դրա բնապահպանական հետևանքները,
- Իջևան քաղաքի զարգացման ծրագրի ո՞ր կետին է համապատասխանում նախագիծը,
- քաղաքապետարանը ՀԷԿ-ի կառուցման համար իրականացրե՞լ է հողահատկացում, եթե՝ այո, խնդրում եմ տրամադրել պատճենը:

Խնդրոմ եմ նաև տրամադրել <<Ջուրլույս>> ՍՊԸ կողմից ներկայացված <<Իջևան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման նախագծային փաստաթղթերի պատճենները:

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին (<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

*Հարգանքներով՝*
*Դավիթ Ղազարյան /   /*
*Իջևանի օրհուս կենտրոնի համակարգող*